

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Էներգախնայողության Աջակցման Հիմնադրամ (ESF-ՀԱՅԱՍՏԱՆ) կազմակերպությունը հիմնադրվել է 2003թ.-ին: Հիմնադրումից ի վեր աշխատել է մի շարք դոնոր և հասարակական կազմակերպությունների հետ՝ բարձրացնելու էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, կայուն զարգացման ուղղությամբ հանրության իրազեկվածության աստիճանը և խթանելու ներդրումներն ու կայուն զարգացումը այս ուղղությամբ:



Հիմնադրամը ստեղծվել է էներգախնայողության Այնաս միջազգային ՀԿ-ի հայաստանյան գործունեության արդյունքում, որի երևանյան գրասենյակի փակումից հետո նաև շարունակել է Այնասի առաքելությունը Հայաստանում: Հիմնադրամը համախմբել է տնտեսագետների, բնապահպանների և ինժինեռների, որը հնարավորություն է ստեղծում համատեղ գտնել ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կանաչ տնտեսական զարգացման խնդիրների համակարգային լուծումներ:

Հիմնադրման տարեթիվ՝ 2003թ. Հիմնական գործընկերներ՝

- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
- ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր
- Եվրամիություն և Եվրոպական խորհուրդ
- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
- Ճապոնական սոցիալական և զարգացման ֆոնդ
- Համայնքներ, մասնավոր ձեռնարկություններ



Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն են.

Կայուն էներգետիկ Պլանավորում

2014թ. Հիմնադրամը Եվրահանձնաժողովի հետ ստորագրել է Քաղաքապետների Դաշնագրի աջակցման համաձայնագիր: Այս կարգավիճակում, Հիմնադրամը աջակցում է հայկական տեղական ինքնակառավարման մարմիններին՝ մունիցիպալ էներգետիկ բազաների և բալանսների կազմման, ջերմոցային գազերի գույքագրման, «կանաչ» և կայուն էներգետիկ ու կլիմատիկ զարգացման ծրագրերի կազմման և ֆինանսական միջոցների հայթհայթման հարցերում:



Մասնագիտական խորհրդատվություն կլիմայի փոփոխության մեղմման, կայուն էներգետիկ և նյութական արդյունավետության լուծումների մշակման և ֆինանսավորման ուղղությամբ

ESF-Հայաստան Հիմնադրամը հանդիսանում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) Բիզնես Աջակցության Ծառայության հավաստագրված կազմակերպություն և իր թիմում ընդգրկում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության Ռեսուրսարդյունավետության և Մաքուր արտադրության (ՌԱՄԱ) հավատարմագրված մասնագետներ: Այս կարգավիճակում, Հիմնադրամի բնապահպանները, տնտեսագետներն ու ճարտարագետները մշտապես որոնում են մասնավոր ձեռնարկություններին մաքուր զարգացման, կանաչ տնտեսության և արդյունավետ ռեսուրս-օգտագործման լուծումներ առաջարկել, որն էլ միաժամանակ բերի տնտեսական օգուտների և դրական բնապահպանական արդյունքի: Հիմնադրամի խորհրդատվությունից արդեն օգտվել են և համապատասխան ներդրումներ են արել հանրային շենքեր, գյուղատնտեսական և արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, գրասենյակային շենքեր Հայաստանում և դրա սահմաններից դուրս: Մեր աուդիտները ուղղված են էներգիայի, հումքի, ջրի օգտագործման արդյունավետության բարձրացման, թափոնների և արտանետումների նվազեցման, ընդհանուր արտադրողականության և շահութաբերության բարձրացման:



Բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության խթանում որպես սոցիալական պաշտպանության միջոց անապով ընդմիջման համար. Միկրո-վարկավորում

2006-2009թթ. էներգախնայողության Աջակցման Հիմնադրամը, Համատիրությունների Սեփականատերերի Ազգային Ասոցիացիայի հետ համատեղ գործարկեց և հաջողությամբ շահագործեց բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքներում էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորման միկրո-վարկերի շրջանառու ֆոնդ Երևանի, Գյումրիի, Վանաձորի և Մարալիկի համատիրությունների համար, որը հիմնված էր էներգախնայողության Ալյանսի նախկին հաջող փորձի վրա և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության ֆինանսական աջակցությամբ:

Հիմնադրամի թիմը քարոզում է էներգաարդյունավետությունը, որպես անապահով ընտանիքներին սակագների աճից պաշտպանելու լավագույն միջոց: Անապահով ընտանիքներում ներդրված էներգախնայողության միջոցառումները ոչ միայն կոճատում են կոմունալ ծախսերը երկարաժամկետ կտրվածքով, այլև հանդիսանում են սոցիալական աջակցության միջոցների ավելի ռացիոնալ տեղաբաշխում (միանվագ անվերադարձելի աջակցության փոխարեն՝ խնդրին տալիս համակարգային լուծում), այլև նպաստում երկրի էներգետիկ անվտանգությանը:

Իրազեկում և Հզորությունների Ստեղծում

Հիմնադրման օրից Հիմնադրամը մասնաիտական գործունեությանը զուգահեռ՝ հավաքել է հնարավորինս մեծ լսարան, որին տրամադրել լայնածավալ տեղեկություններ ցածր ծախսատարության էներգախնայողության միջոցառումների, վերակազմավոր էներգիայի, էներգետիկ պլանավորման և կառավարման տնտեսական և բնապահպանական օգուտների մասին, անցկացրել մի քանի տասնյակ ուսումնական սեմինարներ, հազարավոր տպագիր նյութեր և խորհրդատվություն: